# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*23-ը ապրիլի 2019թ.*

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 27*

*/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/*

***N 17 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 23.04.2019թ. արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ | |

*Տ. Գալստյանը և Ա. Հունանյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

***ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ***

# <u>Օ Ր Ա Կ Ա Ր Գ</u>

1. Աշտարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   */Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/*

2. Աշտարակ քաղաքի Ս. Սարգսի փողոցի N 73 և N 73/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին:

   */Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

3. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

5. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

   */Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

6. Աշտարակ համայնքի ավագանու 21.03.2019թ. նիստի որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

7. <<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 23.11.2018թ. N 4-Ա որոշման հավելված 1-ի մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

8. Աշտարակ համայնքի ավագանու 21.03.2019թ.-ի հմ. 2-Ա <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով 2019թ.-ի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին>> որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

   */Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/*

9. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

   */Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

10. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

    */Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*23-ը ապրիլի 2019թ.*

**ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Ս. ՍԱՐԳՍԻ ՓՈՂՈՑԻ N 73 ԵՎ N 73/1 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ /ԳՆԵԼՈՒ/ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 27*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 18 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի և 79-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ՝ Աշտարակ քաղաքի Ս. Սարգսի փողոցի N 73 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0192-0032/ արտադրական բազան և 5,92հա հողամասը 4 925 000 /չորս միլիոն ինն հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամով, իսկ Ս. Սարգսի փողոցի N 73/1 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0192-0031/ արտադրական շենք-շինությունները և 1,05հա հողամասը 2 080 000 /երկու միլիոն ութսուն հազար/ ՀՀ դրամով գնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 9*** ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

***Տ. Գալստյանը և Ա. Հունանյանը չեն մասնակցել քվեարկությանը:***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***23-ը ապրիլի 2019թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

***Արձ.- 27***

***/Զեկուցող՝ Ծ. ՎԱՀԱՆՅԱՆ/***

***N 19 – Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2019թ.-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18/5 և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32/5 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2019թ.-ի տարեկան բյուջեի եկամտային մասին՝ համաձայն հատված 1-ի:
2. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2019թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
3. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2019թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 3-ի:
4. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2019թ.-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
5. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:
6. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2019թ.-ի տարեկան բյուջեի ծախսային մասին՝ համաձայն բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:

**/հազ. դրամ/**

| | *Վարչական բյուջե* | *Ֆոնդային բյուջե* | *Ընդամենը* |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 564780.8 | 0 | 564780.8 |
| Ծախսային մաս | 566807.1 | 11357.6 | 578164.7 |
| Դեֆիցիտ | -2026.3 | -11357.6 | 13383.9 |
| Պահուստային ֆոնդ | 30000.0 | 0 | 30000.0 |

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 9*** ***ԴԵՄ- 0*** ***ՁԵՌՆՊԱՀ - 0***

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ — ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ — ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ — ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ — ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

***Տ. Գալստյանը և Ա. Հունանյանը չեն մասնակցել քվեարկությանը:***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*23-ը ապրիլի 2019թ.*

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

***Արձ.- 27***

*ԶԵկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ*

***N 20 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38 հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Ի գիտություն ընդունել 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը.

| | Վարչական բյուջե | Ֆոնդային բյուջե | Ընդամենը |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 125448.6 | 8679.7 | 134128.3 |
| Ծախսային մաս | 60958.5 | 0 | 60958.5 |

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 11* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

***23-ը ապրիլի 2019թ.***

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

***Արձ.- 27***

***/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/***

***<u>N 21 – Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Հիմք ընդունելով որոշ հարկապուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Է.**

1. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի և հողի հարկի արտոնություն /հավելված 1/:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

***ԿՈՂՄ - 10*** ***ԴԵՄ- 0  ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |

***Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*23-ը ապրիլի 2019թ.*

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.03.2019Թ. ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 27*

*/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/*

***<u>N 22 – Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի ավագանու 21.03.2019թ. նիստի <<N 1-Ա, N 2-Ա, N 3-Ա, N 4-Ա, N 5-Ա, N 6-Ա, N 7-Ա, N 8-Ա, N 9-Ա>> որոշումների համարները փոխարինել համապատասխանաբար հետևյալ համարներով՝ <<N 8-Ա, N 9-Ա, N 10-Ա, N 11-Ա, N 12-Ա, N 13-Ա, N 14-Ա, N 15-Ա, N 16-Ա>>:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 11* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*23-ը ապրիլի 2019թ.*

**<<ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.11.2018Թ. N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 27*

*/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/*

***N 23 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի ավագանու 23.11.2018թ. N 4-Ա որոշման հավելված 1-ի մեջ կատարել փոփոխություններ և 11-րդ տողի <<Գլխավոր մասնագետ>> բառերը փոխարինել <<Առաջատար մասնագետ>> բառերով, <<120.000>> թվերը՝ <<100.000>> թվերով:

2. Ի գիտություն ընդունել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում լիազոր մարմնի կողմից հաստատվելու պահից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 11* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***23-ը ապրիլի 2019թ.***

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.03.2019Թ.-Ի ՀՄ. 2-Ա <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2019Թ.-Ի ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

***Արձ.- 27***

*<u>/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/</u>*

***<u>N 24 – Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33, 34 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի կետ 42-ի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. <<Աշտարակ համայնքի հին շուկայի տարածքում պուրակի կառուցում>> բառերը փոխարինել <<Աշտարակ համայնքի հին շուկայի տարածքում պուրակի կառուցում և քաղաքային զբոսայգու վերականգնման>> բառերով:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

***ԿՈՂՄ - 11*** ***ԴԵՄ- 0*** ***ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՎՆԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

***23-ը ապրիլի 2019թ.***

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

***Արձ.- 27***

***/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/***

***<u>N 25 – Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Հիմք ընդունելով Լեյլա Էլոյանի գյուղ. նշանակության հողամասում ինքնակամ կառուցված հասարակական նշանակության շինությունների օրինականացման մասին դիմումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. N912-Ն և 29.12.2011թ. N1920-Ն որոշումների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1.Հավանություն տալ Արայի տեղամասի 02-001-0777-0011 ծածկագրում գտնվող, Լեյլա Էլոյանին սեփականության իրավունքով պատկանող 0,6հա գյուղատնտեսական նշանակության վարելահողում ինքնակամ հասարակական նշանակության շինություններով զբաղեցված և շինությունների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 861քմ հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատման փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

***ԿՈՂՄ - 11*** ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***23-ը ապրիլի 2019թ.***

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

***Արձ.- 27***

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 26 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված 748-007 ծածկագրով 0,0635հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը փոխանցվել է որպես ֆիզիկական անձի սեփականություն, սակայն իրականում վերը նշված հողամասը հանդիսանում է համայնքային սեփականություն, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18 հոդվածի 21 կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 748-007 ծածկագրից 0,0635հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Հավանություն տալ առաջին կետում նշված 0,0635հա գյուղատնտեսական նշանակության հողամասից 0,054հա հողամասը աճուրդ-վաճառքով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը, մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի 100%-ը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 11*** ***ԴԵՄ- 0*** ***ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն